ՄԱՅՐ ԱԹՈՌ

— Կաթուղիկոսական ընտրութիւններին մասնակցելու համար Ս. Էջմիածին են ժամանել Շամախու թեմի՝ Տ. Անանիա արքեպիսկոպոսը, Թիֆլիսի թեմի առաջնորդ՝ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը, Ղարաբաղի թեմի՝ Տ. Աշոտ եպիսկոպոսը, Աստրախանի թեմի կառավարիչ Տ. Մխիթար վարդապետը, Բեսսարաբիայի թեմական ներկայացուցիչ՝ Նոր Նախիջևանի փոխանորդ Տ. Մուշէ վարդապետը, Ատրպատականի առաջնորդ՝ Տ. Կարապետ Ծ. վարդապետը։

— Մայր Աթոռ են ժամանել Ալէքսանդրապոլից Տ. Մատթէոս, Նոր Բայազիտից՝ Տ. Խորէն և Բագուից՝ Տ. Զաւէն վարդապետները. առաջին երկուսը՝ իբրև պատգամաւորներին ընդունող յանձնաժողովի անդամներ, իսկ վերջինը՝ որպէս «Զանգ» շաբաթաթերթի խմբագրից։

— Հոկտեմբերի 29-ին Սինոդի նոր հաստատուած անդամներ—Տէր Յուսիկ արքեպիսկոպոսը և Սահակ, Մեսրոպ և Մատթէոս վարդապետները մտան իրանց պաշտօնի մէջ։

— Հոկտեմբերի 28-ին եկաւ Երևանի Նահանգապետ կոմս Տիղենհաուզէն, որ նշանակուած է բարձրագոյն կառավարութեան կողմից ներկայացուցիչ ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութիւններին ներկայ լինելու և իջևանեց Վեհարանում։

— Հոկտեմբերի 29-ին պատարագից յետոյ ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Ա. գերեզմանի վրայ հոգեհանգիստ կատարուեց, երբ Տաճկահայ պատգամաւորները պսակ դրին գերեզմանի վրայ։

— Հոկտեմբերի 30-ին պատարագից յետոյ դոհացողական մաղթանք կատարուեց Կայսերական տան կենաց համար, որից յետոյ աշխարհական պատգամաւորները երդումն ընդունեցին։ Այդ օրը վանքի սեղանատանը պաշ-

տօնական ճաշ կար։ Մեղանակցում էին Ամենապատիւ Տէր Տեղակալը, Երևանի Նահանգապետը, Սինոդի պրոկուրորը, Վաղարշապատի գաւառապետը, Ս. Էջմիածնի միաբանութիւնը, բոլոր պատգամաւորները, ճեմարանի ուսուցչական խումբը և շատ հիւրեր։ Տեղակալը բաժակ առաջարկեց Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր կենաց համար, որ ընդունուեց ցնծագին ուրոյով. ապա Կոմիտաս վարդապետը սեղանակիցների ձայնակցութեամբ երգեց „Боже Царя храни“ հիմնը։ Երկրորդ բաժակ առաջարկեց Կովկասի Փոխարքայ Կոմս Վորոնցով—Դաշկովի կենացը, որ նոյնպէս ցնծագին կեցցէներով ընդունուեց. այնուհետև առաջարկուեցան Տ. Տեղակալի, Նահանգապետի, Կ. Պոլսոյ պատրիարքի ներկայացուցիչ Յակոբ—Աշոտ եպիսկ. Փափազեանի և այլոց կենացները։

Արտասանուեցան բազմաթիւ ճառեր, խօսեցին Զաբանեան, Ահարոնեան, Առաքելեան, Քալանթար և ին։

— Ի պատիւ Տաճկահայ պատգամաւորների ճեմարանում Նոյեմբերի 1 ի երեկոյեան տեղի ունեցաւ Կոմիտաս վարդապետի խմբի համերգը. մէջ ընդ մէջ նուագում և երգում էր հիւր եկած օր. Սպանդարեանը. թէ խումբը և թէ օրիորդ Սպանդարեանը մեծ հաճոյք պատճառեցին հանդիսականներին։

—Նոյեմբերի 2-ին Տաճկահայ պատգամաւորների մի մասը Կարապետ և Գարեգին վարդապետների ուղեկցութեամբ այցելեցին Օշականում ս. Մեսրոպի գերեզմանը, ապա Աշտարակ, Մողնի և Յովհաննու վանքերը։

— Սինոդի հրամանով Ս. Էջմիածնի միաբան Տ. Խոսրով վարդապետ Փիլիթակեանը նշանակուած է Ապարանի շրջանի ժամանակաւոր գործակալ։

— Նոյեմբեր 9-ին Մայր Տաճարում հոգեհանգիստ կատարուեց ի Տէր հանգուցեալ Ն. Կ. Բ. Մեծ իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի հոգւոյ փրկութեան համար։